Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

"Երևանի շոկոլադի գործարան"

Փակ Բաժնետիրական Ընկերություն

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ "Four A Consulting" CJSC

audit accounting advisory assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

Address CAA NGO Register 1 20 0219
Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

"Երևանի Շոկոլադի Գործարան" ՓԲԸ-ի բաժնետերերին ,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Երևանի Շոկոլադի Գործարան" ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը;
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

24 հունիսի 2024թ.
Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր/Աուդիտի ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	3,878,075	3,187,937
Ոչ նյութական ակտիվներ		4,727	6,814
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով		24,503	53,738
		3,907,305	3,248,489
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	1,262,790	1,730,302
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	933,790	415,432
Դրամական միջոցներ	7	95,535	163,623
		2,292,115	2,309,357
Ընդամենը ակտիվներ		6,199,420	5,557,846
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ	8	280,750	280,750
Կուտակված շահույթ		1,854,038	977,857
		2,134,788	1,258,607
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	9	1,567,219	1,770,902
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն	9	1,302,110	837,943
Հետաձգված հարկեր	10	75,967	66,610
		2,945,296	2,675,455
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	9	132,368	58,814
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	825,789	1,469,066
Շահութահարկի պարտավորություն		161,179	95,904
		1,119,336	1,623,784
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		6,199,420	5,557,846

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. հունիսի 24-ին՝

Արտակ Իսրաելյան
Տնօրեն

Վահան Գրիգորյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրացումից հասույթ	12	6,190,267	5,740,975
Վաճառքի ինքնարժեք	13	(4,389,591)	(4,335,897)
Համախառն շահույթ		1,800,676	1,405,078
Այլ եկամուտներ	14	258,281	159,396
Իրացման և ծախսեր	15	(91,841)	(166,487)
Վարչական ծախսեր	16	(398,754)	(358,912)
Այլ ծախսեր	17	(73,496)	(101,190)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,494,866	937,885
Ֆինանսական ծախսեր, զուտ	18	(304,757)	(227,403)
Փախարժեքային տարբերությունից շահույթ, զուտ	19	(82,134)	136,190
Շահույթ/վնաս մինչև հարկելը		1,107,975	846,672
Շահութահարկի գծով ծախս	20	(231,794)	(131,312)
Զուտ շահույթ/վնաս		876,181	715,360
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին		-	-
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		876,181	715,360

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ/ վնաս	Ընդամենը
2022թ. հունվարի 1- ի դրությամբ	280,750	262,497	543,247
Տարվա շահույթ	-	715,360	715,360
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	715,360	715,360
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	280,750	977,857	1,258,607
Տարվա շահույթ	-	876,181	876,181
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	876,181	876,181
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	280,750	1,854,038	2,134,788

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	876,181	715,360
Տարվա շահույթ	389,287	323,975
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,273	1,715
Հիմնական միջոցների օտարումից վնաս	231,794	131,312
Շահութահարկի գծով ծախս	304,757	227,403
Տոկոսային ծախս	82,134	(136,190)
Փոխարժեքային տարբերությունից շահույթ/վնաս	1,885,426	1,263,575
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	467,512	(546,215)
Պաշարների փոփոխություն	(506,939)	(80,573)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(662,065)	1,079,632
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	1,183,934	1,716,419
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(304,757)	(227,403)
Վճարված տոկոսներ	(157,162)	(47,718)
Վճարված շահութահարկ	722,015	1,441,298
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,078,611)	(1,837,862)
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով	30,178	(51,032)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(1,048,433)	(1,888,894)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկեր և փոխառություններ, զուտ	(173,059)	(103,172)
Ֆինանսական վարձակալություն	464,167	622,015
Ֆինանսական գործունեությունից ստացված/ գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	291,108	518,843
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	(35,310)	71,247
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(32,778)	13,601
Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա սկզբում	163,623	78,775
Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա վերջում	95,535	163,623

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

"Սոնագրո" Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2010թ. դեկտեմբերի 30-ին:
"Երևանի շոկոլադի գործարան" ՓԲԸ-ն "Սոնագրո" Փակ Բաժնետիրական Ընկերության իրավահաջորդն է:
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.
Սոս Սահակյան – 70□96 %
Սոնա Սահակյան -29□04 %:
Ընկերությունն իրականացնում է հետևյալ ծառայությունները.

- Հրուշակեղենի արտադրություն,
- Շոկոլադի արտադրություն,
- Շոկոլադի արտահանում,
- Հրուշակեղենի ներմուծում:

2023թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 251 մարդ (2022թ.՝ 280 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացվել են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:
Տես ծանոթագրություն 21:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:
Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Այս ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է այնպես, ինչպես որ նմանատիպ հիմնական միջոցների մաշվածությունը, երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:
Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ միասին: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում: .

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը, հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	20-40 տարի,
Կառուցվածքներ	5-20 տարի,
Մեքենաներ, սարքավորումներ	1- 80 տարի,
Արտադրական և տնտեսական գույք	1- 8 տարի,
Տրանսպորտային միջոցներ	5-8 տարի:

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:
Ամորտիզացիան ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.3 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվներ արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է , ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.4 Վարձակալված ակտիվներ

Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության, ծախսագրվում են իրականացման պահին:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին՝ մուտք, առաջին՝ ելք մեթոդը և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը

Հետագա չափումն իրականացնելու համար ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար "ֆինանսական ծախս" և "ֆինանսական եկամուտ" հոդվածներում:

I. Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից:

II. Դրամական միջոցներ

Դրամական միջոցները ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա

արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և հետագա չափումը
Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Վարկեր և փոխառություններ

Վարկեր և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

II. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:
Սովորական բաժնետոմսերին անմիջականորեն վերագրվող ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:
Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ

դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գնահատման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

3.11 Հասույթի ճանաչում

Ընկերության հասույթը հիմնականում առաջանում է հրուշակեղենի և շոկոլադի ներմուծումից և արտադրությունից:

4 Հիմնական միջոցներ

հազար դրամ	Հողամասեր	Շենքեր շինություններ կառուցվածքներ	Մեքենա-սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ	Արտադրական և տնտեսական գույք, այլ հիմնական միջոցներ	Շահագործման համար ոչ մատչելի ՀՄ-ներ	Ֆինանսական վարձակալությամբ ստացված ՀՄ-ներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	38,342	593,183	1,686,667	197,807	402,750	316,544	3,235,293
Ավելացում	-	-	738,324	190,083	33,241	821,965	1,783,613
Կապիտալացում	-	36,900	4,193	-	-	10,256	51,349
Ներքին շարժ	-	-	1,303	16,014	(17,317)	-	-
Օտարում	-	-	-	-	-	(1,715)	(1,715)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	38,342	630,083	2,430,487	403,904	418,674	1,147,050	5,068,540
Ավելացում	-	-	174,161	43,638	27,052	735,504	980,355
Կապիտալացում	-	28,217	39,667	8758	-	11,634	88,276
Ներքին շարժ	-	-	12,551	-	(32,784)	20,233	-
Ճշգրտում	-	-	(72)	-	-	(44)	(116)
Դուրս գրում	-	-	(17,047)	(12,774)	-	(1,114)	(30,935)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	38,342	658,300	2,639,747	443,526	412,942	1,913,263	6,106,120
Կուտակված մաշվածություն							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	-	55,966	1,416,003	103,935	-	13,915	1,589,819
Տարվա ծախս	-	23,516	201,244	41,450	-	24,574	290,784
Օտարում	-	-	-	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	79,482	1,617,247	145,385	-	38,489	1,880,603
Տարվա ծախս	-	25,614	240,365	50,672	-	60,669	377,320
Ներքին շարժ	-	-	-	-	-	-	-
Դուրս գրում	-	-	(17,047)	(12,775)	-	-	(29,822)
Ճշգրտում	-	-	(53)	-	-	(3)	(56)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	105,096	1,840,512	183,282	-	99,155	2,228,045
Հաշվեկշռային արժեք							
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	38,342	550,601	813,240	258,519	418,674	1,108,561	3,187,937
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	38,342	553,204	799,235	260,244	412,942	1,814,108	3,878,075

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցները գրավադրված են Արմսվիսբանկ ՓԲԸ-ում:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,320,438 հազ.դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 925,409 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

5 Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	903,424	946,068
Անավարտ արտադրություն	64,239	99,460
Արտադրանք	289,420	680,843
Ապրանքներ	1,606	1,233
Այլ պաշարներ	4,101	2,698
	1,262,790	1,730,302

6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	721,158	91,794
Տրված կանխավճարներ	146,878	152,391
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	62,684	167,393
Այլ դեբիտորական պարտքեր	3,070	3,854
	933,790	415,432

Առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 55 օր (2022թ.՝ 6 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը:

7 Դրամական միջոցներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	65,756	152,526
Մնացորդներ բանկերում ՀՀ դրամով	29,693	2,610
Մնացորդներ բանկերում արտարժույթով	86	8,487
	95,535	163,623

8 Սեփական կապիտալ

8.1 Կանոնադրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակ	Հասարակ բաժնետոմսեր 2023թ.	Հասարակ բաժնետոմսեր 2022թ.
Հայտարարված և վճարված բաժնետոմսեր		
Հասարակ բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ	280,750	280,750

8.2 Շահաբաժիններ

2023թ. և 2022թ. Ընկերությունը շահաբաժիններ չի վճարել:

9 Ստացված վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Վարկեր	89,715	-	1567,219	1,770,902
Ֆինանսական վարձակալություն	-	-	1,302,110	837,943
Ֆակտորինգ	29,407	48,805	-	-
Չկրած տոկոսային ծախսեր	13,246	10,009	-	-
	132,368	58,814	2,869,329	2,608,845

Վարկեր

- Ընկերությունը 17.03.2020թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB17-0129-20 վարկային պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 3,900,000 ԱՄՆ դոլար գումար, տարեկան 7,75% լողացող տոկոսադրույքով, մինչև 17.03.2028թ.:

  31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 695,012 հազ. դրամ:

- Ընկերությունը 25.11.2020թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB17-0129-23 վարկային պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 250,000 հազ. դրամ գումար, տարեկան 11,3% տոկոսադրույքով, մինչև 25.11.2025թ.:

  31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 122,086 հազ. դրամ:

- Ընկերությունը 10.05.2021թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB17-0129-26 վարկային պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 162,900 հազ. դրամ գումար, տարեկան 9% տոկոսադրույքով, մինչև 11.05.2026թ.:

  31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 94,250 հազ. դրամ:

- Ընկերությունը 16.06.2021թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB17-0129-27 վարկային պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 198,000 հազ. դրամ գումար, տարեկան 9% տոկոսադրույքով, մինչև 17.06.2024թ.:

  31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 44,707 հազ. դրամ:

- Ընկերությունը 07.04.2022թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB17-0129-34 վարկային պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 237,600 ԱՄՆ դոլար գումար, տարեկան 9% տոկոսադրույքով, մինչև 07.04.2027թ.:

  31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 74,905 հազ. դրամ:

- Ընկերությունը 07.04.2022թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB17-0129-34 վարկային պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 71,000 ԱՄՆ դոլար գումար, տարեկան 9% տոկոսադրույքով, մինչև 07.04.2027թ.:

  31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 22,334 հազ. դրամ:

- Ընկերությունը 21.06.2022թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB17-0129-40 վարկային պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 61,000 հազ. դրամ գումար, տարեկան 14%՝ որից 8%-ը առաջին 36 ամսվաընթացքում սուբսիդավորվելու է << Կառավարության կողմից, տոկոսադրույքով, մինչև 21.06.2027թ.:

  31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 50,533 հազ. դրամ:

- Ընկերությունը 31.05.2023թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB17-0129-60 վարկային պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 16,400 հազ. դրամ գումար, տարեկան 14%՝ որից 8%-ը առաջին 36 ամսվաընթացքում սուբսիդավորվելու է << Կառավարության կողմից, տոկոսադրույքով, մինչև 31.05.2028թ.:

31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 16,184 հազ. դրամ:

- Ընկերությունը 15.06.2023թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB17-0129-61 վարկային գծի պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 94,000 հազ. դրամգումար, տարեկան 10% հաստատուն տոկոսադրույքով, մինչև 15.06.2028թ.:

31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 36,000 հազ. դրամ:

- Ընկերությունը 15.06.2023թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB17-0129-62 վարկային գծի պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 7,500 հազ. դրամ գումար, տարեկան 10,5%՝ որից 8%-ը առաջին 36 ամսվաընթացքում կարող է սուբսիդավորվել << Կառավարության կողմից, տոկոսադրույքով, մինչև 15.06.2028թ.:

31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 3,750 հազ. դրամ:

- Ընկերությունը 05.08.2022թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB22-0082-01 վարկային պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 469,980 հազ. դրամ գումար, տարեկան 14% տոկոսադրույքով ՝ որից 10%-ը սուբսիդավորվում է կառավարության կողմից, մինչև 05.02.2024թ.:

31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 53,446 հազ. դրամ:

- Ընկերությունը 14.07.2023թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB19-0100-05 վարկային պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 300,000 Եվրո գումար, տարեկան 6% հաստատական տոկոսադրույքով, մինչև 12.07.2024թ.:

31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 67,185 հազ. դրամ:

- Ընկերությունը 07.07.2023թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB22-0082-04 վարկային գծի պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 235,000 Եվրո գումար, տարեկան 7,5% հաստատուն տոկոսադրույքով, որից 6%-ը կարող է սուբսիդավորվել << Կառավարության կողմից, մինչև 22.09.2026թ.:

31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 92,115 հազ. դրամ:

- Ընկերությունը 07.07.2023թ.-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է LAB22-0082-03 վարկային գծի պայմանագիրը, որով "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ն պարտավորվում է տրամադրել 647,000 ԱՄՆ դոլար գումար, տարեկան 9,25% հաստատուն տոկոսադրույքով, մինչև 07.07.2025թ.:

31.12.2023թ. դրությամբ վարկի մնացորդը կազմում է 261,899 հազ. դրամ:

- Ներկայացվեց 27.12.2022թ.-ին LAB19-0128-06 վարկային պայմանագիրը: 31.12.2022թ. դրությամբ ըստ "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հաստատական նամակի վարկի մնացորդը կազմում է 1,511,554.43 ռուբլի:

31.12.2023թ. դրությամբ վարկը մարված է:

Լիզինգի գծով առկա պարտավորությունները հետևյալն են.

Պայմանագրի համարը	Գումար հազ. դրամ	Արժույթ	Վճարման ենթակա տոկոսներ հազ. դրամ	Տոկոսադրույք	Սուբսիդ. տոկոսադրույք
LAB19-0017-01	14,562	AMD	61	11%	7%
LAB19-0017-02	3,355	AMD	14	11%	7%
LAB19-0017-03	17,311	AMD	73	11%	7%
LAB19-0017-04	8,248	AMD	35	11%	7%
LAB19-0017-05	19,581	AMD	83	11%	7%
LAB19-0017-06	17,744	AMD	75	11%	7%
LAB19-0017-07	1,426	AMD	3	13%	13%
LAB19-0017-08	4,409	AMD	22	13%	13%
LAB19-0017-09	39,870	AMD	199	13%	13%
LAB19-0017-10	3,647	AMD	18	13%	13%
LAB19-0017-11	3,072	AMD	15	13%	13%

LAB19-0017-12	19,992	AMD	100	13%	13%
LAB19-0017-13	347,479	AMD	1,733	13%	13%
LAB19-0017-14	22,539	AMD	121	14%	10%
LAB19-0017-15	200,763	AMD	1,078	14%	10%
LAB19-0017-16	72,144	AMD	387	14%	10%
LAB19-0017-17	11,424	AMD	31	14%	10%
LAB19-0017-18	36,981	AMD	199	14%	10%
LAB19-0017-19	18,468	AMD	99	14%	10%
LAB19-0017-20	235,833	AMD	2,442	14%	10%
LAB19-0017-21	37,094	AMD	199	14%	10%
LAB19-0017-22	65,616	AMD	510	10,5%	10%
LAB19-0017-23	100,547	AMD	540	14%	10%
LAB19-0017-22	-	AMD	-	14%	10%

Հիմնական Էական լիզինգներն են՝

1. Ընկերությունը 2022թ. Օգոստոսի 10-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է առավելագույնը 504,931 հազ. դրամի ֆինանսական վարձակալության թիվ LAB19-0017-13 պայմանագիրը, 13% տարեկան տոկոսադրույքով, որն ամբողջությամբ սուբսիդավորվում է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից: Ընկերությունը համաձայն վերը նշված պայմանագրի "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ին վճարում է կանխավճար 100,986 հազ. դրամի չափով: Լիզինգի գույքի ձեռքբերման արժեքը կազմում է 403,945 հազ. դրամ: Լիզինգի առարկայի վերադարձման վերջնաժամկետը հաշված հանձնման-ընդունմանստորագրման պահից 96 ամիս՝ 12.08.2030թ.:

2. Ընկերությունը 2022թ. Սեպտեմբերի 8-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է առավելագույնը 32,000 հազ. դրամի ֆինանսական վարձակալության թիվ LAB19-0017-14 պայմանագիրը, 14% լողացող տարեկան տոկոսադրույքով, որից 10%-ը առաջին 42 ամսվա ընթացքում կսուբսիդավորվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Ընկերությունը համաձայն վերը նշված պայմանագրի "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ին վճարում է կանխավճար 6,400 հազ. դրամի չափով: Լիզինգի գույքի ձեռքբերման արժեքը կազմում է 25,600 հազ. դրամ: Լիզինգի առարկայի վերադարձման վերջնաժամկետը հաշված հանձնման-ընդունմանստորագրման պահից 96 ամիս՝ 09.09.2030թ.:

3. Ընկերությունը 2022թ. Սեպտեմբերի 8-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է առավելագույնը 285,034 հազ. դրամի ֆինանսական վարձակալության թիվ LAB19-0017-15 պայմանագիրը, 14% լողացող տարեկան տոկոսադրույքով, որից 10%-ը առաջին 36 ամսվա ընթացքում կսուբսիդավորվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Ընկերությունը համաձայն վերը նշված պայմանագրի "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ին վճարում է կանխավճար 57,007 հազ. դրամի չափով: Լիզինգի գույքի ձեռքբերման արժեքը կազմում է 228,027 հազ. դրամ: Լիզինգի առարկայի վերադարձման վերջնաժամկետը հաշված հանձնման-ընդունմանստորագրման պահից 96 ամիս՝ 09.09.2030թ.:

4. Ընկերությունը 2023թ. Ապրիլի 20-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է առավելագույնը 74,576 հազ. դրամի ֆինանսական վարձակալության թիվ LAB19-0017-16 պայմանագիրը, 14% լողացող տարեկան տոկոսադրույքով, որից 10%-ը առաջին 42 ամսվա ընթացքում կսուբսիդավորվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Լիզինգի գույքի ձեռքբերման արժեքը կազմում է 93,220 հազ. դրամ: Լիզինգի առարկայի վերադարձման վերջնաժամկետը հաշված հանձնման-ընդունմանստորագրման պահից 96 ամիս՝ 21.04.2031թ.:

5. Ընկերությունը 2023թ. Մայիսի 24-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է առավելագույնը 11,809 հազ. դրամի ֆինանսական վարձակալության թիվ LAB19-0017-17 պայմանագիրը, 14% լողացող տարեկան տոկոսադրույքով, որից 10%-ը առաջին 36 ամսվա ընթացքում կսուբսիդավորվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Լիզինգի գույքի ձեռքբերման արժեքը կազմում է 14,762 հազ. դրամ:

Լիզինգի առարկայի վերադարձման վերջնաժամկետը հաշված հանձնման-ընդունմանստորագրման պահից 96 ամիս՝ 26.05.2031թ.:

6. Ընկերությունը 2023թ. Հուլիսի 14-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է առավելագույնը 37,387 հազ. դրամի ֆինանսական վարձակալության թիվ LAB19-0017-18 պայմանագիրը, 14% լողացող տարեկան տոկոսադրույքով, որից 10%-ը առաջին 36 ամսվա ընթացքում կուբսիդավորվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Լիզինգի գույքի ձեռքբերման արժեքը կազմում է 53,410 հազ. դրամ: Լիզինգի առարկայի վերադարձման վերջնաժամկետը հաշված հանձնման-ընդունմանստորագրման պահից 96 ամիս՝ 14.07.2031թ.:

7. Ընկերությունը 2023թ. Մայիսի 15-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է առավելագույնը 19,091 հազ. դրամի ֆինանսական վարձակալության թիվ LAB19-0017-19 պայմանագիրը, 14% լողացող տարեկան տոկոսադրույքով, որից 10%-ը առաջին 36 ամսվա ընթացքում կուբսիդավորվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Լիզինգի գույքի ձեռքբերման արժեքը կազմում է 23,863 հազ. դրամ: Լիզինգի առարկայի վերադարձման վերջնաժամկետը հաշված հանձնման-ընդունմանստորագրման պահից 96 ամիս՝ 12.05.2031թ.:

8. Ընկերությունը 2023թ. Սեպտեմբերի 19-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է առավելագույնը 235,833 հազ. դրամի ֆինանսական վարձակալության թիվ LAB19-0017-20 պայմանագիրը, 14% լողացող տարեկան տոկոսադրույքով, որից 10%-ը առաջին 36 ամսվա ընթացքում կուբսիդավորվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Լիզինգի գույքի ձեռքբերման արժեքը կազմում է 294,762 հազ. դրամ: Լիզինգի առարկայի վերադարձման վերջնաժամկետը հաշված հանձնման-ընդունմանստորագրման պահից 96 ամիս՝ 19.09.2031թ.:

9. Ընկերությունը 2023թ. Նոյեմբերի 20-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է առավելագույնը 37,094 հազ. դրամի ֆինանսական վարձակալության թիվ LAB19-0017-21 պայմանագիրը, 14% լողացող տարեկան տոկոսադրույքով, որից 10%-ը առաջին 42 ամսվա ընթացքում կուբսիդավորվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Լիզինգի գույքի ձեռքբերման արժեքը կազմում է 46,367 հազ. դրամ: Լիզինգի առարկայի վերադարձման վերջնաժամկետը հաշված հանձնման-ընդունմանստորագրման պահից 72 ամիս՝ 20.11.2029թ.:

10. Ընկերությունը 2023թ. Հուլիսի 14-ին "Արմսվիսբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է առավելագույնը 105,652 հազ. դրամի ֆինանսական վարձակալության թիվ LAB19-0017-23 պայմանագիրը, 14% լողացող տարեկան տոկոսադրույքով, որից 10%-ը առաջին 36 ամսվա ընթացքում կուբսիդավորվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Լիզինգի գույքի ձեռքբերման արժեքը կազմում է 127,065 հազ. դրամ: Լիզինգի առարկայի վերադարձման վերջնաժամկետը հաշված հանձնման-ընդունմանստորագրման պահից 96 ամիս՝ 14.07.2031թ.:

31.12.2023թ. դրությամբ լիզինգների մնացորդը կազմում է 1,302,110 հազ. դրամ:

Արմսվիսբանկում 31/12/2023թ. դրությամբ ընկերությունն ունի հետևյալ Ֆակտորինգ՝

Պայմանագրի համարը	Արժույթ	Գումար	Կնքման ամսաթիվ	Մարման ամսաթիվ
FARD210020_00D	AMD	29,407,226.80	26.10.23թ.	23.01.24թ.

10 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը հետևյալն է՝

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	(66,610)	(51,723)
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	(9,357)	(14,887)
Տարեվերջի մնացորդ	(75,967)	(66,610)

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2022թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2022թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Արձակուրդի պահուստ	6,265	2,353	8,618
	6,265	2,353	8,618
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	57,988	17,240	75,228
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	(51,723)	(14,887)	(66,610)

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2023թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Արձակուրդի պահուստ	8,618	361	8,979
	8,618	361	8,979
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	75,228	9,718	84,946
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	(66,610)	(9,357)	(75,967)

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	689,993	686,043
Ստացված կանխավճարներ	19,585	674,432
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	28,367	41,259
Աշխատավարձի գծով պարտք	22,044	17,689
Արձակուրդի պահուստ	49,885	47,878
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	15,651	1,696
Այլ կրեդիտորական պարտքեր	264	69
	825,789	1,469,066

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

12 Իրացումից հասույթ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտադրանքի վաճառքից հասույթ	6,146,517	5,631,234
Ապրանքների վաճառքից	43,670	105,970
Ծառայությունների մատուցումից հասույթ	80	3,771
	6,190,267	5,740,975

13 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	4,352,245	4,238,896
Վաճառված ապրանքների ինքնարժեք	37,346	97,001
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	-	-
	4,389,591	4,335,897

14 Այլ եկամուտներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Պաշարների վաճառքից եկամուտներ	31,671	28,285
Պաշաների հետ վերադարձից եկամուտ	1,364	381
Գործառնական վարձակալությունից եկամուտներ	18,083	30,983
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ	690	105
Հարկային պարտավորության ճշգրտում	150,213	94,599
Շնորհից եկամուտ	44,183	-
Այլ եկամուտներ	12,077	5,043
	258,281	159,396

15 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	10,174	42,674
Տրանսպորտային, ապահովագրական ծախսեր	30,293	53,451
Մարկետինգի և գովազդի ծախսեր	13,589	23,646
Հիմնական միջոցների մաշվածության, սպասարկման ծախսեր	4,386	8,166
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1,413	-
Տարածքի վարձակալության ծախսեր	81	486
Վառելիքի ծախսեր	20,274	31,816
Արագամաշ առարկաներ	4,386	-
Այլ ծախսեր	7,245	6,248
	91,841	166,487

16 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	253,172	196,740
Մաշվածության և ամորտիզացիայի, սպասարկման ծախսեր	43,275	59,454
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	19,631	14,567
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	2,411	2,546
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	42,148	45,750
Բանկային ծառայության և ապահովագրական ծախսեր	4,221	9,689
Վարձակալական ծախսեր	7,089	535
Խորհրդատվական ծախսեր	8,079	7,344
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	1,386	1,228
Այլ ծախսեր	17,342	21,059
	398,754	358,912

17 Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տույժ, տուգանքներից ծախսեր	2,943	885
Այլ պաշարների վաճառքից ծախսեր	25,570	27,977
Ապրանքների կորուստից ծախսեր	-	10
Արձակուրդի պահուստ	2,006	13,071
Մաշվածության ծախսեր	3,819	3,819
Արտարժույթի փոխարկման ծախսեր	36,792	50,476
Այլ ծախսեր	2,366	4,952
	73,496	101,190

18 Ֆինանսական ծախսեր, զուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարկերի տոկոսի ծախս	(305,729)	(227,623)
Տոկոսից եկամուտ	972	220
	(304,757)	(227,403)

19 Փոխարժեքային տարբերությունից եկամուտ, զուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցություն		
Դեբիտորական պարտքեր	11,419	13,601
Դրամական միջոցներ	(32,528)	(145,743)
Ստացված վարկեր, փոխառություններ	(42,930)	229,298
Կրեդիտորական պարտքեր	(18,788)	39,034
Տրամադրված կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման համար	943	-
Եկամուտների վերաբերվող շնորհ	(250)	-
	(82,134)	136,190

20 Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ . դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	222,437	116,425
Հետաձգված հարկ (տես՝ ծանոթագրություն 10)	9,357	14,887
	231,794	131,312

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՓՄԿ-ների ՖՀՄՍ)	1,107,975		846,672	
Շահութահարկ՝ 18% (2022թ.՝ 18 տոկոս)	199,435	18	152,401	18
Չնվազեցվող ծախսեր	32,359	2.92	(21,089)	(2.49)
	231,794	20.92	131,312	15.51

21 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

21.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Ընկերության ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների օգտակարության ժամկետները շենքեր՝ 20-40 տարի, կառուցվածքներ՝ 5-20 տարի, մեքենաների և սարքավորումներ՝ 1-80 տարի, 1-8 տարի արտադրատնտեսական գույք և 5-8 տարի տրանսպորտային միջոցների համար: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները

էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերության ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

Հետաձգված հարկի գնահատում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 10-ում, ճանաչվել է 75,967 հազար դրամի հետաձգված հարկեր: Հետաձգված հարկային հարկերը ձևակերպվում է չօգտագործված արձակուրդից և հիմնական միջոցներից: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ Ընկերությունը ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Ընկերությունը ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

22 Ֆինանսական գործիքներ

22.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության, և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

22.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբեի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	724,228	95,648
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	95,535	163,623
	819,763	259,271

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	3,001,697	2,667,659
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	777,837	753,375
	3,779,534	3,421,034

23 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

23.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

բ) Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից և վարկային գործարքներից: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հոդված 2023թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	185,417	502,172	-	36,639
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	95,449	86	-	-
	280,866	502,258	-	36,639
Ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	1,765,718	1,054,149	181,830	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	389,589	408	387,840	-
	2,155,307	1,054,557	569,670	-
Զուտ արդյունք	(1,874,441)	(552,299)	(569,670)	36,639

Հոդված 2022թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	32,971	10,648	-	52,029
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	51,916	14,034	-	97,673
	84,887	24,682	-	149,702
Ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	1,711,855	947,354	-	8,450
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	298,423	-	454,952	-
	2,010,278	947,354	454,952	8,450
Զուտ արդյունք	(1,925,391)	(922,672)	(454,952)	141,252

Ընկերությունը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2022թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2022թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2022թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլար ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Այլ արժույթի ազդեցություն	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	(55,229)	(92,267)	(56,967)	(45,495)	3,664	14,125

գ) Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

դ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

ե) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

24 Իրական արժեքի չափում

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

25 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով: Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը և ստացված վարկերից: Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը՝ հաշվառելով ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա: Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	2,134,788	1,258,607
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(95,535)	(163,623)
Կապիտալ	2,039,253	1,094,984
Ընդհանուր սեփական կապիտալ	2,134,788	1,258,607
Վարկեր և փոխառություններ	3,001,697	2,667,659
Ընդհանուր ֆինանսավորում	5,136,485	3,926,266
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.40	0.28

26 Պայմանականություններ

26.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Ընկերությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և

վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

26.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է: Ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանի Հանրապետությունում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

26.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր: Վերոհիշյալ հանգամանքները կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

27 Գործարքներ կապակցված կողմերի միջև

27.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Ընկերության բաժնետերերի կողմից:

27.2 Ընկերությունը 31.10.2023թ.-ին տնօրեն Արտակ Իսրայելյանի հետ կնքել է 1,600 հազ. դրամի, անտոկս, փոխառության պայմանագիրը, մինչև 31.12.2023թ. վերադրաձման պայմանով: 31.12.2023թ. դրությամբ փոխառությունը մարված է:

27.3 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

	2023թ.	2022թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	17,097	14,160

28 Երաշխիքներ և գրավադրումներ

Արմսվիսբանկում 31/12/2023թ. դրությամբ ընկերությունն ունի հետևյալ բանկային երաշխիքները՝

Պայմանագրի համարը	Գումար	Արժույթ	Տոկոսադրույք	Հաշվեգրված տոկոսներ	Մարման ժամկետ
LAB17-0129-67	91,640.00	EUR	7.10%	2,096.12	19.02.2024թ.
LAB17-0129-68	41,152.68	EUR	7.10%	722.68	15.03.2024թ.
LAB17-0129-69	90,340.00	EUR	7.10%	748.44	29.04.2024թ.
LAB17-0129-70	91,558.00	EUR	7.10%	343.14	14.05.2024թ.